



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի ասպիրանտ

ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսական կարգավորման և միջազգային
տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանող

ՏԱԹԵՎԻԿ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի մագիստրոս

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԸՆԹԱՅԸ ԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒ- ԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅՈՒՄ

Առանց խաղաղության մենք ի վիճակի չենք լինի կենտրոնացնելու մտքերը մեր նպատակների վրա և կարգավորելու սեփական խնդիրները:

Սի Ծինփին

Հայ-չինական տնտեսական փոխգործակցության սկիզբը դրվել է 1992 թ.՝ նորանկախ ՀՀ-ի և ՉԺՀ-ի միջև դիվանագիտական կապերի հաստատմանը զուգընթաց: Հաշվի առնելով Չինաստանի աշխարհաքաղաքական դերակատարությունը՝ աշխարհագրորեն մեկուսացած Հայաստանի համար էլ ավելի է կարևորվում նման խոշորագույն դերակատարի հետ տնտեսական և քաղաքական սերտ կապերի դինամիկ զարգացումը: Երկու երկրների տնտեսական կապերը բնութագրող ցուցանիշները համեմատության մեջ դիտարկելու դեպքում վկայում են երկկողմ հարաբերությունների չի-

րացված ներուժի մասին, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Հայ-չինական համագործակցությունը կարելի է քննել «Մեկ գոյի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում, որը որքան խոստումնային, նույնքան էլ անկանխարեսելի է Հայաստանի համար օգուտների տեսանկյունից: Սակայն, հաշվի առնելով տարածաշրջանի երկրների և Չինաստանի սերտ համագործակցությունը, ակնհայտ է՝ եթե ՀՀ-ն չվերաիմաստավորի հայ-չինական հարաբերությունների կարևորությունը և գործնական քայլեր չիրականացնի այդ ուղղությամբ, ապա չի բացառվում, որ դուրս մնա գլոբալ նախաձեռնության օրակարգից:

Հիմնաբառեր. «Մեկ գոյի, մեկ ճանապարհ» նախաձեռնություն, տնտեսական կապեր, աշխարհաքաղաքական հետաքրքրություններ, հայ-չինական հարաբերություններ

JEL: F18, F40

DOI: 10.52174/1829-0280_2021_2_111

Ներածություն: Համաշխարհային տնտեսական և քաղաքական թատերաբեմում Չինաստանի երկարաժամկետ ռազմավարական և հավասարակշիռ քաղաքականության արդյունքներն ակներև են, իսկ այդ գործընթացներում վերոնշյալ երկրի դերն ակնհայտորեն շարունակում է աճել: Տարածաշրջանային զարգացումներին ու աշխարհաքաղաքական փոփոխություններին զուգահեռ՝ Հայաստանի համար թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական տեսանկյունից առաջատար գերտերության հետ հարաբերությունների ակտիվացումը և զարգացումը դառնում են օրակարգային: Այս համատեքստում առանցքային հնչեղություն է ստանում հայ-չինական փոխգործակցության ամրապնդման, երկկողմ քաղաքական և տնտեսական շահերի օրակարգ ստեղծելու հարցը: Վերջինս կարելի է դիտարկել Չինաստանի «Մեկ գոյի, մեկ ճանապարհ» նախաձեռնության (այսուհետ՝ ՄԳՄՃ) շրջանակներում, որը «...միջմայրցամաքային երկարաժամկետ քաղաքականության վերաբերյալ ներդրումային ծրագիր է՝ պատմական Մետաքսի ճանապարհով երկրների տնտեսական ինտեգրման արագացման ու ենթակառուցվածքների զարգացման նպատակով»¹: Հարկ է ընդգծել, որ ներկա պահին այս նախագծում Հայաստանի ներգրավվածությունն աննշան է, ավելին՝ մինչև Հայաստանը միայն հայտարարությունների մակարդակում է չինական նախաձեռնության մեջ ներգրավվելու պատրաստակամություն հայտնում, տարածաշրջանի մյուս երկրներն արդեն իսկ առաջարկել և իրականացնում են փոխշահավետ նախագծեր: Ընդհանուր առմամբ, երկկողմ հարաբերություններում ակտիվությունը սահմանափակվում է հիմնականում առևտրային հարաբերություններով, որն արտահայտվում է Չինաստանից Հայաստան ներմուծման դինամիկ աճով, ինչն էլ ավելի է խորացնում առևտրային հաշվեկշռի պակասորդը: Թեև Հայաստանը կարծես դուրս է մնում տարածաշրջանի ենթակառուցվածքային ծրագրերից, այնուամենայնիվ, դեռևս հնարավոր է օգտվել չինական նախաձեռնության օգուտներից՝ միաժամանակ նաև զարգացնելով երկկողմ համագործակցության ուղղությունները:

¹ Belt and Road Initiative, <https://www.beltroad-initiative.com/belt-and-road/>, https://en.imsilkroad.com/z/200424-7/index.shtml?gclid=CjwKCAiAnvj9BRA4EiwAuUMDF67wrcpawQ8qoylg20J8eLI46FLRAcPkpuiwlvRW1ZnveaGTicIroCk6MQAvD_Bwe

Գրականության ակնարկ: Արտասահմանյան և հայրենական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չինական ներդրումային նախաձեռնության իրական նպատակների և տնտեսական օգուտների վերաբերյալ կան հակասական մոտեցումներ ու կարծիքներ, այդ թվում՝ թեմայի աշխարհաքաղաքական բաղադրիչը տեղ է գտնում ինչպես քաղաքագիտական, այնպես էլ տնտեսագիտական մտքի տարբեր դրսևորումներում: Որոշ հեղինակներ² երկակի են մեկնաբանում Չինաստանի՝ որպես համաշխարհային մակարդակում ներդրողի քաղաքականությունը ինչպես հնարավորությունների, այնպես էլ միջազգային և ներքին անկայունությունների տեսանկյունից: Չինաստանի տնտեսության և համաշխարհային տնտեսության մեջ դրա դերի վերաբերյալ առկա են բազմաթիվ գիտական հրապարակումներ, աշխատանքներ³, հաշվարկներ, որոնք ցույց են տալիս Չինաստանի, օրինակ, համախառն ներքին արդյունքի կրճատման ազդեցությունը գլոբալ արդյունքի վրա⁴: Որոշ հրապարակումներ ցույց են տալիս Չինաստանի՝ ներդրումների հիմնական ստացողից համաշխարհային ներդրողի՝ սպասվածից արագ վերափոխումը⁵: Բազմաթիվ խորհրդատվական, վերլուծական կենտրոններ մանրամասն ուսումնասիրել են չինական այս ծրագիրը՝ վերլուծելով և քննարկելով ռազմավարական նախաձեռնության արդյունքում առաջացած տնտեսական հետևանքներն ու ազդեցությունները երկրների զարգացման վրա: Այնուամենայնիվ, որոշ միջազգային քննադատներ և թերահավատներ հակված են չինական սխեման կապելու քաղաքական օրակարգի հետ՝ հերքելով չինացիների հավաստիացումը, թե դա պարզապես տնտեսական նախաձեռնություն է⁶: Նորդինը և Վայսմենը իրենց հետազոտության մեջ պնդում են, որ այս նախագծի միջոցով Չինաստանը ցանկանում է կառուցել սինոցենտրիկ աշխարհակարգ, որը հիմնված է ցանցային կապիտալիզմի վրա⁷: Ընդհանուր առմամբ, հեղինակների կողմից առաջ քաշված այս մոտեցումը ընդունելի է նաև մեզ համար, քանի որ նախագիծը ներառում է ավելի քան 130 երկիր, կապող օղակ է տարածաշրջանների միջև, իսկ նախագծի կենտրոնում Չինաստանն է՝ որպես մշակող և համակարգող երկիր:

² Տե՛ս China's 40 Years of Reform and Development: 1978–2018, The political economy causes of China's economic success, էջ 75-92. <https://www.jstor.org/stable/j.ctv5cgbnk>

³ Տե՛ս Lardy Nicholas R., China in the World Economy. Peterson Institute Press: All Books, Peterson Institute for International Economics, 1994. <https://ideas.repec.org/b/iie/ppress/24.html>

⁴ Տե՛ս Sznajderska A., The role of China in the world economy: evidence from global VAR model https://ssl.nbp.pl/publikacje/materialy_i_studia/270_en.pdf

⁵ Տե՛ս Wong P., Wilhelmus J., Jarand M., Lui J., China's Global Investment Strategy, Milken Institute, 2020. <https://milkeninstitute.org/sites/default/files/reports-pdf/China%E2%80%99s%20Global%20Investment%20Strategy-new.pdf>

⁶ Տե՛ս Khater M. M. A., Lu D., Attia R. A. M., Dispersive Long Wave of Nonlinear Fractional Wu-Zhang System via a Modified Auxiliary Equation Method, AIP Advances, vol. 9, no. 2, 2019. View at: Publisher Site | Google Scholar:

Lu D., Seadawy A. R., Khater M. M. A., Structure of Solitary Wave Solutions of The Nonlinear Complex Fractional Generalized Zakharov Dynamical System, Advances in Difference Equations, vol. 2018, no. 1, 2018. View at: Publisher Site | Google Scholar:

Li J., Qiu Y., Lu D., Attia R., M. Khater, Study on the Solitary Wave Solutions of the Ionic Currents on Microtubules Equation by Using the Modified Khater Method, Thermal Science, vol. 23, no. 6, էջ 2053–2062, 2019. View at: Publisher Site | Google Scholar:

⁷ Տե՛ս Astrid H. M. Nordin, Mikael Weissmann, Will Trump Make China Great Again? The Belt And Road Initiative and International Order:

Ֆան Ջայը նույնպես իր հոդվածում անդրադարձել է Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը, ընդ որում՝ հիմնական շեշտադրումը կատարելով ներդրումային գործընթացների վրա: Ըստ հեղինակի ուսումնասիրությունների՝ Չինաստանի կողմից նախատեսվող ներդրումները տատանվում են 1,4–6 տրիլիոն ԱՄՆ դոլարի սահմաններում⁸: Այս հանգամանքը ևս փաստում է, որ նախագիծը Չինաստանի համար միջոց է՝ հաղթող դուրս գալու գերիշխող դիրքի համար մղվող պայքարում:

Ուսումնասիրված աղբյուրների շարքում ուշագրավ է նաև շրջակա միջավայրի վրա այս նախագծի հետևանքների վերաբերյալ հետազոտությունների վերլուծությունը⁹: Լ. Յուի, Մ. Ջանգի, Կ. Վուի և Մ. Ծենգի համահեղինակած աշխատությունում քննարկվել են նախաձեռնության իրագործման պարագայում ագրոբիզնեսում առաջացող խնդիրները: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել կլիմայի փոփոխության, կանաչ բիզնեսի, սննդամթերքի կայուն արտադրության և ռիսկերի չափման հարցերին՝ կառուցվածքային մոդելավորման միջոցով (ISM): Ամփոփելով նշենք, որ հեղինակները հանգել են այն եզրակացության, որ ագրոբիզնեսը որպես կարևոր կամուրջ պետք է ծառայի շահերի հավասարակշռման հարցում:

Չնայած համաշխարհային տնտեսությունում Չինաստանի աճող դերին և մեր տարածաշրջանում վերջինիս կարևորությանը՝ հայաստանյան մասնագիտական գրականության մեջ թեմայի շուրջ հիմնական հրապարակումները հանդիպում են քաղաքագիտական, դիվանագիտական մեկնաբանումների տեսանկյունից¹⁰, իսկ տնտեսագիտական բնույթի վերլուծական հետազոտությունները սակավաթիվ են: Առկա են որոշ հրապարակումներ, որոնք արտացոլում են հայ-չինական հարաբերությունների շարժընթացը, հեռանկարները¹¹, ինչպես նաև կարևորվում է Չինաստանի հետ հարաբերությունների ամրապնդումը: Ուսումնասիրված գրականությունից հարկ է առանձնացնել «Չինաստան–Եվրասիա քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհուրդ» հիմնադրամի տնօրեն Միեր Սահակյանի «Չինաստանի մեկ գոտի, մեկ ճանապարհ նախաձեռնությունը և Հայաստանը» գիրքը, որում հեղինակն ընդգծել է. «Ներկայիս աշխարհաքաղաքական իրադրությունում ժամանակագրության հիշատակումները չեն աշխատում և ոչ մի նշանակություն չունեն, իսկ արդի ժամանակաշրջանում հին կամ նոր քաղաքակրթություն լինելը, նախկինում եղած կամ իրականում մի մասն էլ հորինված հարաբերությունների մասին պատմությունները ոչ մի դեր չեն խաղում: Առավելություն

⁸ Տե՛ս Zhai F., China's belt and road initiative: A Preliminary Quantitative Assessment. [⁹ Տե՛ս Constructing a Hierarchical Agribusiness Framework in Chinese Belt and Road Initiatives under Uncertainty. \[https://www.researchgate.net/publication/322639702_Constructing_a_Hierarchical_Agribusiness_Framework_in_Chinese_Belt_and_Road_Initiatives_under_Uncertainty\]\(https://www.researchgate.net/publication/322639702_Constructing_a_Hierarchical_Agribusiness_Framework_in_Chinese_Belt_and_Road_Initiatives_under_Uncertainty\)](https://econpapers.repec.org/scripts/redir_pf?u=http%3A%2F%2Fwww.sciencedirect.com%2Fscience%2Farticle%2Fpii%2FS1049007817300775;h=repec:eee:asioco:v:55:y:2018:i:c, էջ 84-92:</p>
</div>
<div data-bbox=)

¹⁰ Տե՛ս Սարգսյան Գ., Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և չին-հայկական հարաբերությունները (1991-2010 թթ.). PhD thesis, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2012. <http://etd.asj-oa.am/701/>

¹¹ Տե՛ս Ալեքսանյան Լ., Հայ-չինական միջպետական առևտրատնտեսական հարաբերությունները և դրանց հեռանկարները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015. http://www.yu.am/files/SSS_Journal_New_7_%20pp.70-75.pdf

կարող է տալ միայն հետևյալ հարցի դրական պատասխանը՝ արդյոք քո երկրում արդար և կայուն տնտեսական իրավիճակ ստեղծել է: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» հայ-չինական հարաբերությունների վերաբերման լայն հնարավորություններ է ընձեռում, որոնց նպատակային կիրառումը հնարավորություն կտա լավագույնս օգտագործել Հայաստանի ներուժը ՄԳՄՃ-ում»¹²: Ըստ էության, փորձագիտական հանրույթի, այդ թվում՝ Մեքսիկոյի Սահակյանի դիտարկմամբ, հայ-չինական հարաբերություններում զգալի փոփոխություններ չի հայտ կգան, երբ հաջողվի Հայաստանում չինական, իսկ Չինաստանում էլ հայկական կապիտալի որոշակի ներկայություն ապահովել:

Հետազոտության մեթոդաբանություն: Թեմայի ուսումնասիրության համար որպես տեսական, մեթոդաբանական, տեղեկատվական հիմք են ծանայել ինչպես օտարալեզու, այնպես էլ հայալեզու աշխատությունները, Հայաստանի պետական մարմինների որոշումները, ՀՀ վիճակագրական կոմիտեի, Պետական եկամուտների կառավարման կոմիտեի, ինչպես նաև միջազգային տեղեկատվական բազաները, միջազգային կառույցների զեկույցները, գնահատականներն ու ամփոփագրերը: Միևնույն ժամանակ, հոդվածի համար ելակետային են եղել նաև երկու երկրների միջև կնքված տնտեսական համաձայնագրերը, հռչակագրերը և հուշագրերը, ԵԱՏՄ - Չինաստան Ազատ առևտրի համաձայնագիրը և փոխգործակցության հուշագրերը, ինչպես նաև այլ նորմատիվ փաստաթղթեր:

Տարիներ շարունակ հայ-չինական հարաբերությունների դրական դինամիկա է գրանցվել արտաքին առևտրի, զբոսաշրջության, մարդասիրական օգնության ոլորտներում: Չինական ներդրումները Հայաստանում իրականացվել են ընդհատումներով, ըստ այդմ՝ բացակայում են ներդրումների ժամանակագրական շարքերը: Հետևաբար՝ թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է վիճակագրական՝ քանակական մեթոդը, որի շնորհիվ վերլուծություն է կատարվել այլ երկրների համանման ցուցանիշների համադրմամբ, ուսումնասիրվել են երկու երկրների տնտեսական հարաբերությունները բնութագրող ցուցանիշները, բացահայտվել՝ արտահանման ներուժ ունեցող ապրանքախմբերը, իրականացվել է համապարփակ վերլուծություն, որի հիմնական արդյունքները ներկայացվել են նաև գրաֆիկական վերլուծության միջոցով: Մասնավորապես՝ դիտարկվել են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում կատարվող ներդրումների ոլորտային ուղղությունները և ծավալները ինչպես աշխարհում, այնպես էլ մեր տարածաշրջանում, Հայաստան-Չինաստան փոխադարձ առևտրի շարժընթացը և ուղղությունները:

Վերլուծություն: 2015 թ. Հայաստանը ստորագրել է «Մեքսիկոյի ճանապարհի տնտեսական գոտու կառուցման գործում համագործակցության

¹² Սահակյան Մ., Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը, 2018.

https://www.academia.edu/37229012/%D5%89%D4%BB%D5%86%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D5%86%D4%BB_%D5%84%D4%B5%D4%BF_%D4%B3%D5%88%D5%8F%D4%BB_%D5%84%D4%B5%D4%BF_%D5%83%D4%B1%D5%86%D4%B1%D5%8A%D4%B1%D5%90%D5%80_%D5%86%D4%B1%D4%BD%D4%B1%D5%81%D4%B5%D5%8C%D5%86%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86%D4%B8_%D4%B5%D5%8E_%D5%80%D4%B1%D5%85%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D5%86%D4%B8

խթանման մասին» հուշագիրը¹³: Հետևաբար՝ այն համագործակցային նախապայմանները, որոնք ներկայումս առկա են երկու երկրների միջև, կարելի է դիտարկել որպես այս նախաձեռնության մի մաս: ՄԳՄՃ նախաձեռնության շրջանակներում, 2013 թ. ի վեր, Չինաստանը սերտ համագործակցության փաստաթղթեր է ստորագրել ավելի քան 126 երկրների և 29 միջազգային կազմակերպությունների հետ, որի արդյունքում կառուցվել են օտարերկրյա տնտեսական և առևտրային համագործակցության ավելի քան 80 գոտիներ, և այդ երկրներում ստեղծվել են շուրջ 300 հազար տեղական աշխատատեղեր, իսկ ընդհանուր ներդրումները գերազանցել են ավելի քան 30 մլրդ ԱՄՆ դոլար¹⁴: Բացի այդ, ըստ ՏՀԶԿ տվյալների, Չինաստանը ՄԳՄՃ նախաձեռնության շրջանակներում շինարարության մեջ արդեն իսկ ներդրել է շուրջ 420 միլիարդ ԱՄՆ դոլար¹⁵:

Հայաստան–Չինաստան հարաբերություններն ավելի լավ պատկերացնելու համար դրանք պետք է դիտարկել հարևան երկրների՝ Չինաստանի հետ հարաբերությունների համեմատության մեջ: ՄԳՄՃ նախաձեռնության համաժողովներին ՀՀ պատվիրակության բացակայությունը և, միաժամանակ, հարևան երկրների ներկայացուցիչների ավելի մեծ ընդգրկվածությունը անուղղակիորեն կամ ուղղակիորեն մատնանշում են նախաձեռնության նկատմամբ Հայաստանի դիրքորոշումը: Հարավային Կովկասի երկրներից Վրաստանի և Չինաստանի հարաբերություններն առանձնակի ուշադրության են արժանի: Հետևողական աշխատանքի արդյունքում, մի քանի տարվա բանակցություններից հետո, 2017 թ. ստորագրվեց, իսկ արդեն 2018 թ. հունվարից ուժի մեջ մտավ Վրաստանի և Չինաստանի ստորագրած ազատ առևտրի համաձայնագիրը¹⁶: Հատկանշական է, որ Վրաստանը Հարավային Կովկասի միակ երկիրն է, որն ունի նման համաձայնագիր Չինաստանի հետ: 2017 թ. Չինաստանը գնեց Փոթիի ազատ արդյունաբերական գոտու բաժնետոմսերի 75 տոկոսը (Փոթիի Վրաստանի խոշոր նավահանգիստն է)¹⁷: Չինաստանը կարևորում է թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի տարանցիկ նշանակությունը: Չինաստանը և Ադրբեջանը 2019 թ. ստորագրել են 800 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ գործարքի պայմանագիր, և Չինաստանը ներդրումներ է կատարել Ադրբեջանում գտնվող Բաքվի միջազգային ծովային առևտրի նավահանգստում¹⁸: Հարևան երկրներից Իրանում Չինաստանը 400 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրումներ է կատարել էներգետիկայի և

¹³ Պեկինում կայացել են հայ-չինական բարձր մակարդակի բանակցություններ, 2015 թ. president.am

¹⁴ Տե՛ս BRI Connect: An Initiative in Numbers https://www.refinitiv.com/content/dam/marketing/en_us/documents/reports/refinitiv-zawya-belt-and-road-initiative-report-2019.pdf

¹⁵ Տե՛ս China's Belt and Road Initiative in the Global Trade, Investment and Finance Landscape <https://www.oecd.org/finance/Chinas-Belt-and-Road-Initiative-in-the-global-trade-investment-and-finance-landscape.pdf>

¹⁶ Տե՛ս China's Free Trade Agreements Network, <http://fta.mofcom.gov.cn/list/chinageorgiaen/chinageorgiaennews/1/encateinfo.html>

¹⁷ Տե՛ս Chinese corporation to purchase 75% of Poti Free Industrial Zone shares, Agenda.ge, <https://old.cbw.ge/investment/chinese-company-buys-75-stake-poti-industrial-zone/>

¹⁸ Տե՛ս Azerbaijan and China Sign \$800 Million Economic Package: The Geo-Economic Implications, <https://jamestown.org // Azerbaijan's Port on China's Road, https://reconnectingasia.csis.org>

տրանսպորտի ոլորտներում¹⁹: Ավելին՝ փորձագիտական շրջանակներում Իրանը նախաձեռնությունում դիտարկվում է որպես «տրանսպորտային և լոգիստիկ հաբ»²⁰: Այս համատեքստում մեզ համար առանցքային նշանակություն ունի «Հյուսիս-հարավ» ծրագրի վերջնական իրականացումը: Աշխարհաքաղաքական փակուղում հայտնված Հայաստանը, սահմանափակվելով սակավաթիվ հնարավորություններով, արդեն մի քանի տարի է՝ իրականացնում է «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման ծրագիրը՝ բազմատրանշ ֆինանսավորման տարբերակով²¹: Ռազմավարական այս ծրագրի իրականացումն ամբողջությամբ տեղավորվում է չինական նախաձեռնության տրամաբանության մեջ: Մյուս ընկերությունների հետ միասին մայրուղու շինարարությանը մասնակցում են նաև Չինաստանի կապալառուներ, սակայն ներկայիս տեմպերով այս ճանապարհը պատրաստ կլինի միայն տասնամյակներ անց, մինչդեռ այսօր արդեն իսկ ձևավորվում է վերականգնված Մետաքսի ճանապարհի ուրվագիծը: Մեկ այլ նախագիծ՝ «Իրան-Հայաստան» երկաթուղու կառուցումը, աստիճանաբար ավելի է վերածվում երազանքի²²:

Ինչպես արդեն նշվեց, ի տարբերություն Հայաստանի, հարևան երկրները գործուն քայլեր են ձեռնարկում Չինաստանի հետ համագործակցության տեսանկյունից, որի մասին են վկայում նաև առևտրատնտեսական ցուցանիշները: Տնտեսական համագործակցության կարևոր ուղղություններով ներդրումների իրականացման ցուցանիշները համեմատելով, օրինակ, Վրաստանի ցուցանիշների հետ, արձանագրում ենք, որ այդ ցուցանիշով Հայաստանը զգալիորեն զիջում է՝ հաշվի առնելով նաև Վրաստանի տարանցիկ գոտի լինելու առավելությունը և Չինաստանի հետաքրքրությունը երկրի նկատմամբ: Այսպես՝ Վրաստանում միայն 10 տարվա ընթացքում Չինաստանի ուղղակի ներդրումները կազմել են ավելի քան 640 մլն ԱՄՆ դոլար²³, մինչդեռ 1988 թ-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում ներդրումների համախառն հոսքերը Չինաստանից Հայաստան կազմել են 534.9 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 528.9 ԱՄՆ դոլարն ուղղակի ներդրումների տեսքով²⁴, որոնք համախառն ընդհանուր ներդրումների ընդամենը 0.01 տոկոսն են²⁵: Չինաստանից ներդրումները կրում են ոչ պարբերական բնույթ: Հատկանշական է, որ Չինաստանը Հայաստանում ներդրումներ կատարելու հետաքրքրվածություն դրսևորել և ներդրումներ է իրականացրել նախաճգնաժամային տարիներին, մասնավորապես՝ 2007 և 2019 թվականներին:

¹⁹ Տե՛ս China to Invest \$400 bn in Iran's Energy, Transport Sectors, <https://www.beltandroad.news>

²⁰ China Eyes Iran as Important Belt and Road Hub, <https://eurasianet.org/china-eyes-iran-as-important-belt-and-road-hub>

²¹ Տե՛ս «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ. <https://armroad.am/am/projects/North-South-Road-Corridor-Investment-Program>

²² Տե՛ս Belt & Road Project where Armenia is Absent, <https://www.beltandroad.news>


²³ Տե՛ս Վրաստանի վիճակագրական գրասենյակ. <https://www.geostat.ge/en/modules/categories/191/foreign-direct-investments>

²⁴ Համախառն հոսքերն ընդգրկում են 1988 թ. մինչև 2019 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումների, գների, փոխարժեքի և այլ՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման հետևանքով իրականացված փոփոխությունների):

²⁵ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf

Վրաստանում ներդրումները, ինչպես բնորոշ է Չինաստանի ներդրումային քաղաքականությանը, ուղղվում են դեպի ենթակառուցվածքներ՝ էներգետիկա, ֆինանսական հատված, անշարժ գույքի շուկա և այլն: Ուսումնասիրելով չինական կապիտալի ներհոսքն ըստ ոլորտների՝ նշենք, որ չինական ընկերությունները Հայաստանում հետաքրքրություններ ունեն դեղերի, սննդամթերքի, խմիչքի, ջրերի, տեքստիլի, կենցաղային տեխնիկայի և ռեստորանային շուկաներում, ինչպես նաև Հայաստանի մետաղական հանքերի նկատմամբ: Այժմ ՀՀ-ում գործում են հայ-չինական համատեղ տասնյակ ընկերություններ, որոնք իրենց գործունեությունն են ծավալում սննդամթերքի, խմիչքի, ծխախոտի, տեքստիլ արտադրանքի և կոշիկեղենի մեծածախ առևտրի ոլորտներում, ռեստորանային բիզնեսում, կենցաղային էլեկտրական սարքավորումների արտադրությունում: Գործում են նաև չինական ցանցային ընկերություններ, որոնք իրականացնում են դեղերի և բժշկական ապրանքների, կոսմետիկ միջոցների մանրածախ առևտուր:

Երկկողմ հարաբերությունների դրական շարժընթաց է նկատվում արտաքին առևտրի բնագավառում՝ միաժամանակ խորացնելով նաև առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը: Վերջին 13 տարվա ընթացքում երկու երկրների առևտրաշրջանառությունն ավելացել է ավելի քան 4 անգամ, ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում (2007-2019 թթ.) առևտրային հաշվեկշռի մնացորդը եղել է բացասական:



Գծապատկեր 1. Երկկողմ առևտրաշրջանառությունն ըստ ներմուծման 2 ցուցանիշի²⁶, առևտրային հաշվեկշռի մնացորդ (2007–2019)

2008 թ. ընդհանուր առևտրաշրջանառության մեջ Չինաստանի մասնաբաժինը 7 տոկոս էր, ընդ որում՝ արտահանման մեջ 2008 թ. կշիռը կազմել է 0.2 տոկոս, ներմուծման մեջ՝ 8.6 տոկոս: 2008–2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամն իր հետևանքներն է թողել նաև երկկողմ առևտրի ծավալների վրա. 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, Չինաստանից Հայաստան ներմուծման ծավալը կրճատվել է 25 տոկոսով, իսկ արտահանումը, ընդհա-

²⁶ Նույն տեղում:

կառակը, ավելացել է ավելի քան 9 անգամ, այն դեպքում, երբ Հայաստանից ընդհանուր արտահանման ծավալները կրճատվել են 28 տոկոսով: 2015 թ., ինչպես և 2009-ին, հաշվեմնացորդի կրճատումը տեղի է ունեցել ներմուծման կրճատման հաշվին, որի անկումը կազմել է մոտ 24 տոկոս, իսկ արտահանումը կրճատվել է 3 տոկոսով:

Երկրների առևտրի շարժընթացի առավել հետաքրքրական պատկեր ենք ստանում Հայաստան–Չինաստան առևտրաշրջանառության հաշվարկման մեջ դիտարկելով ըստ արտահանող երկրի ներմուծումը, այսինքն՝ ինչքան է ներմուծումը Չինաստանից: Գծապատկեր 1-ում երկու տարբերակով հաշվարկված առևտրաշրջանառության տարբերությունը զգալի է. եթե ներմուծման գծով 2019-ին, ըստ ապրանքի ծագման երկրի, երկրորդը Չինաստանն է, ապա, ըստ արտահանող երկրի, պատկերն այլ է. Չինաստանը 3-րդ խոշոր գործընկերն է: 2017-ին, ըստ արտահանող երկրի, ներմուծման կտրուկ աճ է նկատվել (գծապատկեր 2), ինչը պայմանավորված է հիմնականում «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, դրանց մասեր» ապրանքախմբի, օրգանական միացությունների ներմուծման աճով:



Գծապատկեր 2. Չինաստանից Հայաստան ներմուծման շարժընթացը (2007–2019)

Հատկանշական է, որ Թուրքիայից ներկրման արգելքի պարագայում չի բացառվում չինական ապրանքների ավելի մեծ ծավալով մուտքը հայկական շուկա: Ավելին՝ Էկոնոմիկայի նախարարը չինական կողմի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտնել է, որ չինական կողմին կտրամադրվի ապրանքատեսակների ցանկ, որպեսզի չինական ընկերություններն ուսումնասիրեն և ներկայացնեն իրենց առաջարկությունները՝ նման ապրանքներ Հայաստան ներկրելու վերաբերյալ²⁷:

Չինաստանից Հայաստան է ներմուծվում քառանիշ դասակարգմամբ ավելի քան 1000 ապրանք: Ըստ 2019 թ. տվյալների՝ Չինաստանից ՀՀ է ներմուծվել ավելի քան 750 մլն ԱՄՆ դոլարի ապրանք, որը մոտ 13 տոկոսով գե-

²⁷ ՀՀ Էկոնոմիկայի նախարարը հանդիպում է ունեցել Հայաստանում 2ԺՀ նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպանի հետ. <https://www.mineconomy.am/news/2153>

րազանցում է 2018 թ. նույն ցուցանիշը: Ներմուծվողներից հիմնականն ու խոշորը «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ և դրանց մասեր» ապրանքախումբն է, որին բաժին է ընկնում ներմուծման մոտ կեսը՝ 44 տոկոսը: Նշենք նաև, որ այդ ապրանքախմբի ներմուծման ծավալը, ըստ Պետական եկամուտների կոմիտեի տվյալների, 2018 թ. համեմատությամբ ավելացել է 14 տոկոսով, իսկ տեսակարար կշիռը՝ 5 տոկոսային կետով: Մասնավորապես՝ էական կշիռ ունի հեռախոսների, հեռախոսային ապարատների ներմուծումը, որը կազմում է ընդհանուր ներմուծման շուրջ 13 տոկոսը: 2018 թ. համեմատությամբ վերջիններիս ներմուծումն ավելացել է 22 տոկոսով: Նշված ապրանքախմբում ներառված ապրանքներից ներմուծվում են նաև մոնիտորներ, պրոյեկտորներ, համակարգիչներ: Չինաստանը համակարգչային սարքերի ամենախոշոր արտահանողն է. 2019 թ. դրությամբ տարեկան արտահանման արժեքը 148 մլրդ ԱՄՆ դոլար է, որը կազմում է համաշխարհային շուկայի արտահանման ավելի քան 40 տոկոսը²⁸: Միայն 2019 թ. Հայաստան են ներմուծվել շուրջ 1 մլն հեռախոսային ապարատներ (ծայնի, պատկերի և այլնի ընդունման-հաղորդման), որոնց շուրջ 56 տոկոսը՝ Չինաստանից: Չինաստանից ներմուծվող այլ ապրանքախմբերը ներկայացված են գծապատկեր 3-ում:


Ինչպես բնորոշ է ընդհանրապես Հայաստանի արտահանման կառուցվածքին, Չինաստանը ևս բացառություն չէ բազմազանեցման տեսանկյունից: Հայաստանը մշտապես Չինաստան է արտահանել 5 ապրանքատեսակ (պղինձ, թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, խաղողի բնական գինի, էթիլային սպիրտ, խմորման ենթարկված այլ ըմպելիք), որոնք կազմել են ընդհանուր արտահանման ավելի քան 90 տոկոսը: Հայաստանից Չինաստան արտահանման կառուցվածքում ամենախոշոր մասնաբաժինն ունի հանքահումքային արտադրանքը, մասնավորապես՝ Չինաստան հիմնականում արտահանվում է պղինձ, որի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ մոտ 90 տոկոս է: 2019 թ-ին Չինաստանին բաժին է ընկել Հայաստանից պղինձի արտահանման մոտ 28 տոկոսը: Պղինձի արտահանման ծավալը 2018 թ. համեմատությամբ ավելացել է շուրջ 1.8 անգամ, որն էլ ապահովել է Հայաստանից Չինաստան արտահանման աճը: Այս համատեքստում տարբեր մակարդակներում շատ է քննարկվում պղինձաձուլարանի կառուցման հարցը: Այսպես՝ Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանը և Չինաստանի նորանշանակ դեսպան Ֆան Յունը 2020 թվականի դեկտեմբերին կայացած հանդիպմանը անդրադարձել են Հայաստանում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ պղինձաձուլարանի կառուցման շուրջ բանակցությունները վերսկսելու հնարավորությանը, որոնք սկսվել էին դեռ անցած տարվա վերջին, սակայն ժամանակավորապես դադարել էին՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակով²⁹: Հաջորդ խոշոր արտահանվող ապրանքախումբը «Տրանսպորտային միջոցներն» են. ընդհանուր

²⁸ Տե՛ս Visualizing the International Market for Computer Device Exports, Howmuch.net

²⁹ Տե՛ս ՀՀ Կառավարության կայքէջ (դեկտ., 2020), Փոխվարչապետ Տիգրան Ավինյանն ընդունել է Չինաստանի դեսպանին.

<https://www.gov.am/am/news/item/14953/?fbclid=IwAR0zObI5dWZehpPwvSHugCjWwVldzeTcAQXrNGKizdWbwiLiNxoAXXpEO>

արտահանման մեջ տեսակարար կշիռը մոտ 6 տոկոս է: 2019 թ. արտահանվել է 274 մարդատար ավտոմեքենա՝ 2018 թ. 205-ի փոխարեն: 2018 թ. արտահանվել են նաև տրակտորների, շարժիչային փոխադրամիջոցների սարքեր և մասեր: Ավտոմեքենաների արտահանման ծավալն ավելացել է մոտ 24 տոկոսով, որի հաշվին էլ գրանցվել է նշված ապրանքախմբի աճը:



Գծապատկեր 3. Հայաստանից Չինաստան արտահանման և ներմուծման կառուցվածքը 2019 թ.

Չինաստան են արտահանվում նաև հիմնականում բժշկության մեջ կիրառվող սարքեր և սարքավորումներ: Համեմատաբար խոշոր ապրանքախմբերից է «Պատրաստի սննդի արտադրանքը», որի արտահանումն ավելացել է 2 անգամ՝ ի հաշիվ խաղողի բնական գինու, սիգարի, սիգարելայի, սիգարետի, շոկոլադի (ավելի քան 3 անգամ) չափաբաժինների մեծացման: Ապրանքախմբի մեջ մեծ բաժին է կազմում չբնափոխված էթիլային սպիրտի (մոտ 42 տոկոս), ապա սիգարների արտահանումը: Արտահանվում են նաև պահածոյացված մրգեր, ընկուզեղեն, հատապտուղներ:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ Չինաստանը ծխախոտ ներմուծող երկրների շարքում առաջին տասնյակում է³⁰: Հարկ է ընդգծել, որ վերջին տարիներին՝ 2016 թ. սկսած, Հայաստանը սկսել է արտահանել համեմատաբար ավելի մեծ քանակությամբ ծխախոտ: 2010-2011 թթ. արտահանվել է մոտ 3 հազար հատ, 2017 թ.՝ մոտավորապես նույն քանակությամբ, սակայն 2019 թ. ծխախոտի արտահանումը Չինաստան կտրուկ ավելացել է՝ հասնելով ավելի քան 35 մլն հատի:

Թե՛ ծխախոտի արտահանման, թե՛ Հայաստանի համար հետաքրքրություն ներկայացնող գինու արտահանման ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են 2019 թվականին: 2018 թվականի համեմատությամբ, 2019 թվականին խաղողի գինու արտահանման ծավալն ավելացել է ավելի քան 3,5 անգամ՝ կազմելով մոտ 250 հազար ԱՄՆ դոլար: Նշյալ ժամանակահատվածում Հայաստանից Չինաստան է արտահանվել ավելի քան 75 հազար

³⁰ Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքէջ// Tobacco Trade Who.int

լիտր խաղողի գինի, ինչը գինու ընդհանուր արտահանման 2 տոկոսն է: Արտահանման մեկ այլ կարևոր ուղղություն է բնական մեղրի արտահանումը, որը, սակայն, ևս կազմակերպվել է ընդհատումներով: Մեղրն արտահանվում է անհատական ջանքերի շնորհիվ՝ որոշ անհատների կողմից: 2013–2014 թթ. մեղրի՝ դեպի Չինաստան արտահանումը կազմակերպվել է «Անուշակ» հայ-չինական ՓԲԸ-ի կողմից³¹: Ուշագրավ է Չինաստանի մաքսային գլխավոր վարչության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև «ՀՀ-ից Չինաստան արտահանվող մեղրի պարենային անվտանգության, անասնաբուժական ոլորտի և բույսերի պահպանության մասին» ստորագրված արձանագրությունը³², որը գյուղատնտեսական մթերքները Չինաստանի շուկա դուրս բերելու հարմար պայմաններ է նախատեսում: Հատկանշական է, որ Չինաստանը մեղրի խոշոր արտադրող, միաժամանակ նաև խոշոր սպառող է: Չինաստանը մեղրի արտահանման խոշոր շուկա ունեցող երկրներից է³³: Չինաստանում բավականին տարածված է կեղծ մեղրի արտադրությունը, ուստի, շատ չինացիներ նախընտրում են գնել ներմուծված մեղր, այսինքն՝ հասարակության մի խավ սպառում է ներմուծված մեղր: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի ընտրանքային դիտարկման՝ Հայաստանում արտադրվող մեղրի մոտավոր ծավալը տատանվում է 2000-2200 տոննայի սահմաններում: Հայաստանում արտադրված մեղրի 51 տոկոսը վաճառվել է, 5,2 տոկոսն իրացվել է ապրանքափոխանակությամբ, 1,6 տոկոսը տրվել է բնամթերքով ծառայությունների դիմաց, 22 տոկոսը օգտագործվել է տնտեսությունում, իսկ 20,7 տոկոսը մնացորդն է տնտեսությունում³⁴: Ղրղզստանում, որը ևս արտահանում է իրականացնում Չինաստան, գործում են մեղրի և մեղրի հիմքով ապրանքատեսակների արտադրությամբ զբաղվող ընկերություններ: Տարբեր գնահատականներով՝ Ղրղզստանում կա մոտ 1000 մեղվաբույժ և 90000 ընտանիք մեղվափեթակ. տարեկան արտադրվում է մոտ 3000 տոննա մեղր³⁵: Ինչպես ցույց են տալիս մեր դաշտային հետազոտությունները և մասնագետների հետ քննարկումները, բնական մեղրի արտահանումը հեռանկար ունեցող ուղղություն է, և այդ ոլորտում անհրաժեշտ ու համապատասխան քայլերի ձեռնարկումը կտա իր արդյունքը: Ավելին՝ տեխնոլոգիական զարգացումների ժամանակահատվածում մասնավոր հատված – պետություն համագործակցությամբ անհրաժեշտ է ապահովել առցանց հարթակներում (էլեկտրոնային առևտուր) հայկական արտադրանքի, ապրանքատեսակների

³¹ Տե՛ս Buckwheat Honey Market Study Final Report, BUCKWHEAT HONEY MARKET STUDY, Dec., 2015, <https://open.unido.org/api/documents/4673719/download/Buckwheat%20Honey%20Market%20Study%20Final%20Report>

³² ՀՀ արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) կայքէջ, Ձոհրաբ Մնացականյանը հանդիպեց Չինաստանի ԱԳ նախարար Վան Իին (մայիս, 2019). https://www.mfa.am/hy/press-releases/2019/05/26/fms_armenia_china/9597

³³ (March, 2019), Sweet gold – the Chinese honey market,

<https://chinafoodingredients.com/2019/03/05/sweet-gold-the-chinese-honey-market/>

³⁴ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2019 թվականին. https://www.armstat.am/file/article/iracum_2019.pdf?fbclid=IwAR2tIvMgFuXJEmb_yNFYjoBUh89h1Z7bNLSOsyOxOHIWnGfgkBN_fLLy7kA

³⁵ Տե՛ս Beekeeping in Kyrgyzstan (Oct., 2020). <https://www.stamps.kg/news/2019-beekeeping-in-kyrgyzstan.html>

ներկայությունը: Այսպիսով՝ նշենք, որ առավել հեռանկարային կարող է լինել պատրաստի սննդի արտադրանքից՝ գինու, շոկոլադի, պահածոյացված մրգերի, հատապտուղների, ընկուզեղենի, ծխախոտի, բնական մեղրի արտահանումը, սակայն, դիտարկելով այս ապրանքների 10 տարվա ժամանակային շարքը, պարզ է դառնում, որ դրանց արտահանումը կայուն չի եղել և կազմակերպվել է ընդհատումներով: Նշված ապրանքների՝ Չինաստան արտահանումը Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ տատանվում է 1-3 տոկոսի սահմաններում, իսկ որոշ դեպքում նույնիսկ չի հասնում 1 տոկոսի:

Ելնելով վերոնշյալից՝ կարևորվում է ոչ միայն արտահանման բազմազանեցման հարցը, այլ նաև չինական ներդրումների ներգրավման այնպիսի մեխանիզմների մշակումը, որոնք կկրեն պարբերական բնույթ և առավել համահունչ կլինեն Չինաստանի ներդրումային քաղաքականության առանձնահատկություններին, մասնավորապես՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում իրագործվող նախագծերի տրամաբանությանը: Այս համատեքստում էական նշանակություն ունի փոխշահավետ ներդրումային նախագծերին Չինաստանի մասնակցությունը: Որպես օրինակ՝ բազմիցս նշվել է «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցմանը Չինաստանի մասնակցության անհրաժեշտությունը (թե՛ մասնավոր ընկերությունների, թե՛ պետական մակարդակով)³⁶, ինչը կարող է հանգեցնել ինչպես երկու երկրների, այնպես էլ հարևան երկրների և տարածաշրջանային ինտեգրման կառույցների՝ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև շահերի խաչման կարևոր հանգրվանի: Հեռանկարային այլ ուղղություններից են զբոսաշրջությունը, ռազմարդյունաբերությունը, թվային տեխնոլոգիաները:

Եզրակացություններ: Չնայած շուրջ 3 տասնամյակ տևող Հայաստան-ՉԺՀ միջպետական տնտեսական փոխգործակցությանը՝ կարող ենք արձանագրել, որ առկա ներուժը լիովին չի օգտագործվում, ավելին՝ անհրաժեշտ է վերանայել որդեգրած մոտեցումները: Առևտրատնտեսական հարաբերությունների տեսանկյունից չիրացված ներուժը մասամբ պայմանավորված է երկու երկրների միջև հաղորդակցական համակարգի բարդությամբ՝ ուղիղ տրանսպորտային կապի բացակայությամբ, ինչպես նաև Հայաստանի թերզարգացած տրանսպորտային ենթակառուցվածքով: Թեև նմանատիպ օբյեկտիվ պատճառները բացասական ազդեցություն են ունենում երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարի վրա, այնուամենայնիվ, դրանք չեն բացառում երկարաժամկետ հեռանկարում վստահության ամրապնդման և հաջող տնտեսական փոխգործակցության ապահովման հնարավորությունները: Իրականացված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հեռանկարային կարող է լինել պատրաստի սննդի որոշ ապրանքատեսակների արտահանումը, որը կազմակերպվել է ընդհատումներով: Այսպես՝ ունենալով բազմազանեցված ներմուծում, սակայն արտահանում՝ ընդամենը 5 ապրանքատեսակի գծով, որը կազմում է արտահանման 90 տոկոսը, անհրաժեշտ է մասնավոր հատված - պետություն ակտիվ համագործակցություն, համապատասխան հարթակների ստեղծում և, բացի դրանից, երկու պետություններում գործող առևտրարդյունաբերական պալատների միջև գործակցության ակտիվացում: Հաշվի առնելով Հայաստանում հաջողակ ոչ մեծ գործարար

³⁶ Տե՛ս ՀՀ ԲՏԱ նախարարության կայքէջ. Hti.am

համայնքի առկայությունը, ինչպես նաև միջանձնային կապերը, նկատի ունենալով Չինաստանի մշակութային առանձնահատկությունները՝ պետք է ակտիվ երկխոսություն սկսել թե՛ պետություն - մասնավոր հատված, թե՛ երկրների պաշտոնատար ներկայացուցիչների, ինչպես օրինակ՝ առևտրային բնագավառի ներկայացուցիչների մակարդակով: Հատկապես հիմա, երբ համաշխարհային տնտեսությունում տեղի են ունենում նոր վերադասավորումներ և փոփոխություններ, Հայաստանի ակտիվ ընդգրկվածությունը նախագծում անհրաժեշտություն է:

Օգտագործված գրականություն

1. Սահակյան Մ., Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը, 2018.
https://www.academia.edu/37229012/%D5%89%D4%BB%D5%86%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D5%86%D4%BB_%D5%84%D4%B5%D4%BF_%D4%B3%D5%88%D5%8F%D4%BB_%D5%84%D4%B5%D4%BF_%D5%83%D4%B1%D5%86%D4%B1%D5%8A%D4%B1%D5%90%D5%80_%D5%86%D4%B1%D4%BD%D4%B1%D5%81%D4%B5%D5%8C%D5%86%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86%D4%B8_%D4%B5%D5%8E_%D5%80%D4%B1%D5%85%D4%B1%D5%8D%D5%8F%D4%B1%D5%86%D4%B8
2. ՀՀ ԲՏԱ նախարարության կայքէջ.
https://hti.am/main.php?lang=1&page_id=664
3. ՀՀ վիճակագրական կոմիտե.
https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf
4. ՀՀ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ.
<https://armroad.am/am/projects/North-South-Road-Corridor-Investment-Program>
5. Վրաստանի վիճակագրական գրասենյակ.
<https://www.geostat.ge/en/modules/categories/191/foreign-direct-investments>
6. Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքէջ. Tobacco Trade Who.int
7. Belt and Road Initiative, <https://www.beltroad-initiative.com/belt-and-road/>, https://en.imsilkroad.com/z/200424-7/index.shtml?gclid=CjwKCAiAnvj9BRA4EiwAuUMDf67wrcpawQ8qoYlg20J8eL146FLRAcpRkpiuwlvRW1ZnveaGTiclRoCk6MQAvD_BwE
8. China's 40 Years of Reform and Development: 1978–2018 The Political Economy Causes of China's Economic Success, <https://www.jstor.org/stable/j.ctv5cgbnk>
9. Wong P., Wilhelmus J., Jarand M., Lui J., China's Global Investment Strategy, Milken Institute, 2020.
<https://milkeninstitute.org/sites/default/files/reports-pdf/China%E2%80%99s%20Global%20Investment%20Strategy-new.pdf>
10. BRI Connect: An Initiative in Numbers.
https://www.refinitiv.com/content/dam/marketing/en_us/documents/reports/refinitiv-zawya-belt-and-road-initiative-report-2019.pdf

11. China's Belt and Road Initiative in the Global Trade, Investment and Finance Landscape. <https://www.oecd.org/finance/Chinas-Belt-and-Road-Initiative-in-the-global-trade-investment-and-finance-landscape.pdf>
12. China's Free Trade Agreements Network. <http://fta.mofcom.gov.cn/list/chinageorgiaen/chinageorgiaennews/1/encateinfo.html>
13. Chinese Corporation To Purchase 75% of Poti Free Industrial Zone shares, Agenda.ge. <https://old.cbw.ge/investment/chinese-company-buys-75-stake-poti-industrial-zone/>
14. Azerbaijan and China Sign \$800 Million Economic Package: The Geo-Economic Implications. <https://jamestown.org//Azerbaijan's-Port-on-China's-Road>, <https://reconnectingasia.csis.org>
15. China to Invest \$400 bn in Iran's Energy, Transport Sectors. <https://www.beltandroad.news>
16. Belt & Road Project where Armenia is Absent. <https://www.beltandroad.news>

МЕРИ ОВСЕПЯН

Аспирант кафедры международных экономических отношений АГЭУ

НАРИНЕ ПЕТРОСЯН

Студентка 4-го курса факультета экономического регулирования и международных экономических отношений АГЭУ

ТАТЕВИК АРУСТАМЯН

Магистр кафедры международных экономических отношений АГЭУ

Динамика армяно-китайских экономических отношений и императив активации сотрудничества.— Армяно-китайское экономическое сотрудничество началось в 1992 году с установления дипломатических отношений между новой независимой Арменией и Китаем. Поскольку Китай является одним из основных геополитических игроков, для Армении возможно динамичное развитие тесных экономических и политических связей с таким глобальным игроком. Показатели, характеризующие экономические связи между двумя странами, особенно если рассматривать их в сравнении, свидетельствуют о нереализованном потенциале двусторонних отношений, что обусловлено рядом факторов. Армяно-китайское сотрудничество можно рассматривать в рамках проекта «Один пояс, один путь», который столь же перспективен, сколь и непредсказуем с точки зрения выгод для Армении. Однако, принимая во внимание тесное сотрудничество между странами региона и Китаем, очевидно, что если Армения не переосмыслит важность армяно-китайских отношений и не предпримет практических шагов в этом направ-

лени, не исключено, что она будет исключена из глобальной инициативы.

Ключевые слова: инициатива «Один пояс, один путь», экономические связи, геополитические интересы, армяно-китайские отношения.

JEL: F18, F40

DOI: 10.52174/1829-0280_2021_2_111

MERI HOVSEPYAN

PhD Student of the Chair of International Economic Relations of ASUE

NARINE PETROSYAN

4th Year Student of the Department of Economic Regulation and International Economic Relations of ASUE

TATEVIK ARUSTAMYAN

MA Student of the Chair of International Economic Relations of ASUE

Dynamics of Armenian-Chinese Trade Relations and the Imperative of Activating Cooperation.— Armenian-Chinese economic cooperation began in 1992 with the establishment of diplomatic relations between the newly independent Armenia and China. As China is one of the main geopolitical actors, the dynamic development of close economic and political ties with such a global player is possible for Armenia. The indicators characterizing the economic relations between the two countries, especially considered in comparison, testify to the unrealized potential of bilateral relations, which is due to a number of factors. The Armenian-Chinese cooperation can be considered within the framework of the One Belt, One Road initiative, which is as promising as unpredictable in terms of benefits for Armenia. However, taking into account the close cooperation between the countries of the region and China, it is obvious that if Armenia does not rethink the importance of the Armenian-Chinese relations and does not take practical steps in this direction, it is possible that it will be excluded from the global initiative.

Key word: "One Belt, One Road" initiative, economic ties, geopolitical interests, Armenian-Chinese relations.

JEL: F18, F40

DOI: 10.52174/1829-0280_2021_2_111